Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը լիազորում է աշակերտներին օգտվել տեխնոլոգիայից, որը պատկանում է կամ այլ կերպ տրամադրված է շրջանի կողմից, ինչպես նաև անհատական սարքերից, որոնք կրթական նպատակ ունեն: Դպրոցում գտնված ժամանակ տեխնոլոգիայից օգտվելն արտոնություն է, որը թույլ է տրվում դպրոցական շրջանի կողմից: Այն ենթակա է կրթական խորհրդի կողմից սահմանված պայմաններին, սահմանափակումներին, որոնք ամրագրված են կանոնակարգերում, վարչական կանոններում և սույն «Ընդունելի օգտագործման պայմանագրում» և Հավելված Ա-ում, որն ուղեկցում է սույն համաձայնագրին:

Դպրոցական շրջանն ակնկալում է, որ բոլոր աշակերտներն պատասխանատվությամբ օգտվեն տեխնոլոգիայից՝ հնարավոր խնդիրներից և պատասխանատվությունից խուսափելու համար: Շրջանը կարող է ողջամիտ սահմանափակումներ դնել դպրոցների, նյութերի, և/կամ տեղեկատվության վրա, որն աշակերտների համար հասանելի է մեր համակարգի միջոցով: Դպրոցական շրջանն օգտվում է տեխնոլոգիական պաշտպանության միջոցներից՝ հնարավորին չափ անչափահասներին հեռու պահելու անպարկեշտ, պոռնոգրաֆիկ կամ վնասակար տեսողական և գրավոր պատկերների հասանելիությունից՝ արգելափակելով կամ զտելով այն: Շրջանը կարող է և կվերահսկի աշակերտների համացանցային գործունեությունները և մուտք գործել, վերանայել, պատճենահանել և պահպանել կամ ջնջել ցանկացած հաղորդակցություն կամ փաստաթուղթ և անհրաժեշտության դեպքում դրանք ցույց տալ չափահասներին: Օգտվողները չպետք է գաղտնիությունն ապահովող որևէ ակնկալիք ունենան շրջանի սարքերը, համակարգը և/կամ համացանցից կամ փաստաթղթերից, ներառյալ էլեկտրոնային փոստից, օգտվելիս: Վերոհիշյալը ներառում է ցանկացած և բոլոր անձնական առարկները, որոնք օգտագործվում են դպրոցում:

Ծնողի/պահապանի համաձայնությամբ, շրջանը, միջնակարգ և միջանկյալ դպրոցների բոլոր աշակերտին էլեկտրոնային փոստի հասցե կտրամադրի: Աշակերտները իրավունք կունենան էլեկտրոնային փոստով նամակներ ուղարկել միայն շրջանի մյուս հասցեներին: Աշակերտները իրավունք կունենան էլեկտրոնային փոստով նամակներ ստանալ շրջանից դուրս աղբյուներից՝ միայն կրթական ծրագրերից օգտվելու և գաղտնագրերը փոփոխելու համար: Էլեկտրոնային փոստի հասցեն տրամադրվում է ըստ շրջանի հայեցողության և կարող է կասեցվել և/կամ չեղյալ համարվել ցանկացած ժամանակ:

Ըստ այս պայմանագրի, տեխնոլոգիան ներառում է, բայց չի սահմանափակվում. համակարգիչներով, շրջանի ծրագրերի ցանցով (ներառյալ մատակարարիչն (servers) ու անթել համացանցային կապը (Wi-Fi), համացանցով (the Internet), էլեկտրոնային փոստով, USB հարթակով, նոթբուկներով (laptops), պլանշետներով (tablets), հեռախոսներով և տեխնոլոգիական այլ սարքերով:

Յուրաքանչյուր աշակերտի ծնող/պահապան, ով իրավունք ունի օգտվել շրջանի տեխնոլոգիայից պետք է ստորագրի «Օգտագործման ընդունելի պայմանգիր»-ը՝ ցույց տալով, որ կարդացել և հասկացել են պայմանգիրն ու Հավելված Ա-ն:

Աշակերտի պատասխանատվություններ

Ստորագրելով և անվանատառերը դնելով, դուք ընդունում եք, որ հասկացել եք հետևյալը.

1. Ես պատասխանտու եմ թվային դրական կարգապահություն ցուցադրելու համար:

    ա. Ես դրական թվային պատասխանատվություն եմ կրում, ներառյալ

համապատասխան վարք, համացանցի ներդրումներ կայքերում, սոցիալական ցանցերում, քննարկումների սենյակում, լրատվամիջոցների փոխանակման կայքերում և էլեկտրոնային հաղորդակցման այլ կայքերում, ինչպես նաև նոր տեխնոլոգիայում:

բ. Ես ազնիվ կլինեմ բոլոր թվային հաղորդակցություններում:

գ. Ես հասկանում եմ, որ այն ամենը ինչ ես անում և տեղադրում եմ համացանցում, պետք է չխանգարի դպրոցի գործունեությանը կամ խափանի դպրոցի անվատնգությունն ու ապահովությունը:

2. Ես պատախանատու եմ անձնական տեղեկությունը գաղտնի պահելու համար:

ա. Ես չեմ կիսի իմ կամ այլ անձանց անձնական տեղեկությունը, ներառնելով, բայց չսահմանափակվելով, անուններ, տնային հասցե, հեռախոսի համար, ծննդյան ամսաթվեր:
բ. Ես կենթարկվեմ բոլոր օրենքներին, օգտագործման ընդունելի այս օրենքին, և շրջանի անվտանգության բոլոր կանոններին:

3. Ես պատասխանատում եմ իմ գաղտնագրի և շրջանի հաշիվների իմ գործունեությունների համար:

ա. Ես ոչ մեկի հետ չեմ կիսի դպրոցական կամ շրջանային իմ գաղտնագրերը և անունը:
բ. Ես մուտք չեմ գործի ուրիշների հաշիվների մեջ:
գ. Ես կանջատեմ չգործածվող սարքերը և հաշիվները, գաղտնիությունը և անվտանգությունը պահպանելու համար:

4. Ես պատասխանատու եմ բանավոր, գրավոր կամ գեղարվեստական որևէ արտահայտման համար:

5. Ես պատասխանատու եմ ուրիշների հետ հարգանքով և արժանապատվությամբ վարվելու համար:

ա. Ես չեմ ուղարկի և/կամ տարածի ատելի, խտրական կամ զրպարտող թվային հաղորդագրություն կամ անպատշաճ տեքստեր:
բ. Ես հասկանում եմ, որ ոչ մի տեսակի ահաբեկություն, նաև համացանցային, անթույլատրելի է:

6. Ես պատասխանատում եմ մուտք գործել միայն կրթական կայքեր, երբ օգտվում են շրջանի կամ իմ սեփական սարքից, որը միացված է շրջանի համակարգին:

ա. Ես չեմ փնտրի, ցուցադրի կամ շրջանառության մեջ դնի այնպիսի նյութեր, որոնք արտահայտում են ատելության խոսքեր, սեռական ակնարկներ կամ բռնություն:
բ. Ես հասկանում եմ, որ բացառությունները կկատարվեն ուսուցչի կամ ադմինիստրատորի կողմից, որը դպրոցական հանձնարարության մասը կկազմի:
գ. Ես հասկանում եմ, որ շրջանի համակարգի օգտագործումս անօրինական, քաղաքական կամ առևտրական նպատակով խստորեն արգելվում է:

7. Ես պատասխանատում եմ հարգել և պահպանել շրջանի էլեկտրոնային ռեսուրսների և համակարգի անվտանգությունը:

ա. Ես չեմ փորձի շրջանցել անվտանգության պարամետրերը և ֆիլտրները, այդ թվում նաև շրջանի կողմից արգելված կայքերը:
բ. Ես չեմ տեղադրի կամ օգտագործի անօրինական ծրագրակազմ, ներառնելով հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր, չարտոնված ծրագրակազմ կամ կիրառումներ շրջանի համակարգիչների, պլանշետների, հեռախոսների կամ նոր տեխնոլոգիայի վրա:
գ. Ես ինտերնետից չեմ օգտվի անձնական տվյալների պլանով կամ թեժկետով չեմ միանա համացանցին շրջանի կամ իմ անձնական սարքով: Ես չեմ օգտագործի շրջանի համակարգը կամ սարքավորումը չլիազորված տեղեկություն ստանալու համար, չեմ փորձի օրենքով պաշտպանված տեղեկություն ձեռք բերել կամ մարմնավորել այլ անձանց:

8. Ես պատասխանատու եմ շրջանի սարքավորումների հետ կապված բոլոր ողջամիտ խնամքի համար:

. ա. Ես հասկանում եմ, որ ցանկացած ձևի վանդալիզմ արգելվում է:
բ. Վանդալիզմի ցանկացած հայտնի կամ կասկածելի ակտերը կհայտնեմ համապատասխան իշխանությունների:
գ. Ես կհարգեմ իմ և այլ անձանց շրջանի սարքավորումների օգտագործումն ու հասանելիությունը:

9. Ես պատասխանատում են հարգել ուրիշների գործը:

ա. Ես կհետևեմ հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի (http://copyright.gov/title17/) ուղեցույցներին:

բ. Ես չեմ արտագրի այլ անձանց աշխատանքը և չեմ ներկայացնի որպես իմը, և կնշեմ օգտված բոլոր աղբյուրները:

գ. Ես չեմ ներբերռնի անօրիանկան երաժշտություն, ծրագրակազմ, կիրառություններ և այլ գործեր:

10. Ես անօրինական ճանապարհով չեմ ներբեռնի երաժշտություն, համակարգչային ծրագիր, կիրառական ծրագրեր և այլ գործեր:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏ.
Ես հասկանում եմ և կհետևեմ համակարգչից օգտվելու կանոններին ու պարտականություններին: Ես հասկանում եմ, որ այս կանոնների և պատասխանատվությունների ցանկացած խախտում կզրկի համակարգչից օգտվելու առավելությունը, կհանգեցնի կարգապահական և համապատասխան իրավական գործողությունների: Ես համաձայն եմ նաև տեղեկուցնել ուսուցիչին, գրադարանավարին, տեխնոլոգիական օժանդակ աշխատակազմին կամ ադմինիստրատորին տեղեկատվական համակարգի չարաշահման դեպքում: Չարաշահումը ներառում է հաղորդագրության ուղարկումը կամ ստանալը, որոնք ցույց են տալիս կամ ենթադրում պոռնոգրաֆիա, ռասիզմ, սեքսիզմ, ահաբեկություն, սպառնալիքներ, անհամապատասխան բառապաշար և վերը նշված այլ խնդիրներ:

_____ _____
Աշակերտի ստորագրություն ամսաթիվ

ԾՆՈՂ ԿԱՄ ՊԱՀԱՊԱՆ.

Որպես (student's name) _____, ծնող/պահապան, ես կարդացել եմ այս պայմանագիրը և հասկանում եմ, որ համակարգիչների և ծրագրակազմի ռեսուրսները մշակված են միայն կրթական նպատակներով: Ես հասանում եմ, որ շրջանի համար անհնար է վերահսկել և սահմանափակել բոլոր վիճելի նյութերի հասանելիությունը և ես պատասխանատվություն չեմ կրի ցանցում ձեռք բերված նյութերի համար: Ես համաձայն եմ նաև զեկուցել տեղեկատվական համակարգի ցանկացած անօրինական չարաշահում շրջանի համակարգի ադմինիստրատորին: Չարաշահումը կարող է լինել տարբեր ձևերով, բայց կարող է դիտվել որպես ուղարկված կամ ստացված ցանկացած հաղորդագրություն, որը ցույց է տալիս կամ ենթադրում է պոռնոգրաֆիա, ոչ էթիկական կամ անօրինական պահանջներ, ռասիզմ, սեքսիզմ, ահաբեկություն, սպառնալիքներ, անհամապատասխան լեզու և վերը նկարագրված այլ խնդիրներ: Ես հասկանում եմ, որ իմ երեխան չպետք է որևէ ձևով անհամապատասխան նյութեր բերի դպրոց, ներառյալ էլեկտրոնային կամ պահեստավորման սարքեր, ինչպես նաև հասկանում եմ, որ հայտնաբերման դեպքում կարգապահական միջոցներ կձեռնարկվեն:

Ես թույլ եմ տալիս իմ երեխային օգտվել դպրոցի համակարգչային համակարգից: Ես հաստատում եմ, որ տրված տեղեկությունը ճիշտ է:

Ես թույլ եմ տալիս __ , թույլ չեմ տալիս __ իմ երեխային էլեկտրոնային փոստի հասցե ունենալ:

Ծնողի/պահապանի անուն (խնդրում ենք գրել տպատառերով).

_____

_____ _____

Ծնողի ստորագրություն ամսաթիվ

Շրջանի սարքերի և ցանցերի անպատասխանատու օգտագործման/չարաշահման հետևանքները կարող են հանգեցնել սահմանափակ հասանելիության: Վերոհիշյալ պարտականությունների խախտումը համարվում է չարաշահում: Այսպիսի չարաշահումը կարող է նաև հասցնել աշակերտին կարգապահական և/կամ պաշտոնական պատասխանատվությունների, ներառյալ կասեցում դպրոցից (suspension), հեռացում կամ քրեական պատասխանատվության պետական մարմինների կողմից: Շրջանը կփորձի ցանկացած կարգապահական գործողություն համապատասխանեցնել յուրաքանչյուր խախտման հետ կապված խնդրին: (Հավելյալ տեղեկությունների համար օգտվել BUL-6399.0 կետից, Սոցիալական մեդիայի օրենքներ աշակերտի համար):

Դպրոցական շրջանը չի երաշխավորում մատուցված ծառայությունների որակը, ինչպես նաև պատասխանատու չէ ցանցի կամ շրջանի հաշիվների օգտագործումից բխող պահանջների, կորուստների, վնասների, ծախսերի կամ այլ պարտավորությունների համար:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԲՐԲԵՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՇՐՋԱՆԻ ԲՋԱՍ ՕՐԵՆՔԸ

Հերկայալն ընդգծում է Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի առաջարկը «Բերեք ձեր անձնական սարքը» (ԲՋԱՍ - BYOD) ծրագրում մասնակցող աշակերտների համար: Վերքոհիշյալ ուղեցույցները բացատրում են, թե ինչն է թույլատրվում և ընդգծում կանոններին չենթարկվելու հետևանքները: Խնդրում ենք նկատի ունենալ, որ վերջնական որոշումը, թե ինչն է թույլատրվում կամ ինչը ոչ, պետք է կայացվի ուսուցչի կողմից:

1. Աշակերտները կարող են դպրոցում կրել կամ օգտվել անձնական էլեկտրոնային սարքերից, եթե դրանք չեն խանգարում կրթական ծրագրին կամ դպրոցական միջոցառումներին և չեն օգտագործում անօրինական կամ ոչ բարոյական գործողություններ ծավալելու նպատակով, որոնցից են քննությունների ժամանակ ծածկագրից օգտվելը կամ անպատեհությունները:

2. Դպրոցական շրջանը պարտականություն չի կրում այդ սարքերի կորստի, գողության, փսասվածքի կամ պահպանման համար: Աշակերտները պետք է կրեն բոլոր պատասխանատվությունները այդ սարքերը ապահով պահելու համար:

3. Էլեկտրոնային սարքերը պետք է անջատված և աչքից հեռու պահել դասերի ժամանակ կամ այն ժամանակ, երբ այն կարգելվի դպրոցի աշխատակցի կողմից: Սարքը կարելի է միացված պահել, եթե այն օգտագործվում է առողջական նպատակով կամ ուսուցչի թույլտվությամբ: Աշակերտները կարող են օգտվել բջջային հեռախոսներից միայն արտակարգ կամ վթարային իրավիճակի դեպքում, բայց պետք է դադարեցնեն սարքի օցտագործումը, եթե այն խանգարի ուսուցչի հրահանգներին, աշակերտների անվտանգությունը ապահովելու համար:

4. Դպրոցական շրջանը պատասխանատվություն չի կրում անձնական բջջային հեռախոսով օգտվելու ծախսերի վճարման դիմաց: Աշխատակազմը կքաջալերի աշակերտներին օգտվել շրջանի համացանցային անթել կապից (Wi-Fi) համացանցից օգտվելու համար:

5. Էլեկտրոնային սարքերով տեսանյութեր նկարելը, լուսանկարելը կամ ձայնագրություններ անելը (դպրոցում եղած ժամանակ) չի թույլատրվում: Այն կարելի է կատարել միայն դպրոցի աշխատակցի թույլտվությամբ:

6. Աշակերտների պարտավորությունն է դպրոց բերելու ամբողջովին լիցքավորված սարքեր: Դրանք չեն կարող հոսանքին միացված մնալ դասասենյակում կամ ուրիշ տեղ: Ուսուցիչները կամ դպրոցի աշխատակիցները պատասխանատու չեն դասասենյակում կամ մեկ այլ տեղ թողած սարքերի համար: Նրանք կարող են թույլ տալ սարքերի լիցքավորումը:

7. Դպրոցի ադմինիստրատորը և/կամ օրինապահը կարող է ստուգել դպրոց բերված սարքը կասկածի դեպքում, եթե այն օգտագործվել է անօրինական ձևով կամ բավականին փաստեր կան, որ այն սխալ կերպով է օգտագործվել. օրինակ՝ (սակայն չի սահմանափակվում) խաբեություն քննությունների ժամանակ, չարտոնված ձայնագրում (լսողական և/կամ տեսողական): Հակառակ դեպքում, դպրոցական շրջանի աշխատակիցը չի կարող ստուգել սարքը, առանց աշակերտի և նրա ծնողի կամ պահապանի համաձայնության:

8. Աշակերտներին չի թույլատրվում ձայնագրել, լուսանկարել ուրիշ աշակերտների աշխատանքները առանց նրանց, ուսուցչի կամ դպրոցի աշխատակցի թույլտվության:

9. Միջնակարգ դպրոցի աշակերտները կարող են այդ սարքերը օգտագործել դասերի միջև ընկած ժամանակահատվածում, դասամիջոցի կամ ճաշի ժամանակ, կամ դասերից հետո, եթե դրանք ընդդիմադիր չեն վերը նշված օրենքներին: Դասերի ժամանակ, միջանկյալ դպրոցի աշակերտները կարող են օգտվել այդ սարքերից միայն դպրոցի աշխատակցի թույլտվությամբ:

10. Աշակերտները չեն կարող այնպես օգտվել էլեկտրոնային սարքերից, որոնք կարող են խափանել կրթական կամ դպրոցական միջոցառումները:

11. Աշակերտներից չի պահանջվի օգտվել իրենց սեփական սարքերից: Դպրոցական շրջանն ակնկալում է, որ ուսուցիչները այլ սարքեր կհատկացնեն աշակերտներին (ըստ կրթական պահանջի), երբ աշակերտը չունենա իր սեփական սարքը կամ չի ցանկանա օգտվել իր սեփական սարքից:

12. Աշակերտները չեն կարող թույլ տալ այլ աշակերտների օգտվել իրենց սեփական սարքերից (դասերի ընթացքում):

13. Այս պայմանների խախտումը կարող է վերադաստիարակման հանգեցնել: Եթե աշակերտի օգտագործած սարքը խանգարում է մյուսներին, ապա դպրոցական շրջանի աշխատակիցը, առաջին խախտման ժամանակ, կարող է զգուշացնել աշակերտին անջատել սարքը կամ նկատողություն անել նրան: Հաջորդ խախտման դեպքում, աշխատակիցը կարող է վերցնել այն և աշակերտին վերադարձնել դասաժամի, դպրոցական օրվա կամ միջոցառման վերջում: Աշակերտը կարող է կորցնել սարքը իր մոտ պահելու իրավունքը, եթե նորից օրենքի խախտում կատարի, բացի այն դեպքում, եթե այն առողջական նպատակով է օգտագործվել: Աշակերտները կարող են ենթարկվել այլ վերադաստիարակչական մեթոդների, եթե խախտել են դպրոցի առանձնահատուկ օրենքը, օրինակ՝ խաբեություն քննությունների ժամանակ:

Այս պայմանների խախտումը կարող է հանգեցնել առաջադեմ կարգապահության: Եթե աշակերտի կողմից էլեկտրոնային ազդանշանային սարքի օգտագործումը խանգարում է առաջացնել, դպրոցի ադմինիստրատորը ստիպված կլինի կարգապահություն սահմանել աշակերտի համար: